Լատվիայի նախագահ Վալդիս Զադլերսը Վեհարանում

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Դեկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Լատվիայի Հանրապետության նախագահ Վալդիս Զաղլերսին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Ողջունելով Լատվիայի Հանրապետության նախագահի այցը հայոց հոգեւոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետը ներկայացրեց հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ առհասարակ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ունեցած դերն ու նշանակությունը, անցած պատմական ուղին:

Անդրադառնալով երկու երկրների ժողովուրդների բարեկամությանը՝ Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց Լատվիայի իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերած հոգածության համար: *«Ուրախ ենք, որ մեր ժողովրդի զավակները Ձեր երկրում ամբողջովին վայելում են պետության ընձեռած հնարավորությունները եւ կարող են ապրել հոգեւոր ու ազգային կյանքով: Այսօր Լատվիայում կա հայկական եկեղեցի, կիրակնօրյա հայկական դպրոց, որն Աստծո ողորմածությամբ հույս ունենք դարձնել ամենօրյա: Մեր երախտագիտությունը, բարեմաղթանքներն ու օրհնությունն ենք բերում Ձեզ ու Ձեր երկրին՝ աղոթելով, որ հեղինամուտ եւս ապրեք խաղաղ ու բարօր կյանքով: Մենք փոքր ժողովուրդներ ենք եւ հաճախ գտնվելով օտարի լծի տակ՝ լավ գիտենք խաղաղության արժեքը: Թող Աստված օրհնի բոլոր բարեսեր մարդկանց եւ հաջողությամբ պսակի նրանց բոլոր խաղաղասիրական ձեռնարկները»,-* նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Լատվիայի նախագահն իր հերթին նշեց, որ հայ ժողովրդի զավակները, լինելով Լատվիայի օրինավոր քաղաքացիներ, իրենց ներդրումն ունեն երկրի զարգացման գործում: Նախագահը կարեւորեց նաեւ Եկեղեցու հոգեւոր դերակատարությունը ներկայիս հասարակական, քաղաքական ու ընկերային կյանքում:

Այցի ավարտին Լատվիայի նախագահն ու նրան ուղեկից պատվիրակությունը եղան Մայր Տաճարում, Վեհարանի թանգարանում: